

Եւ յետոյ սպաննալիք...: Կրնան «անախորժ երեւոյթներ» պարզուիլ եղեր: Եւ որո՞նք պիտի պարզեն այդ «անախորժ երեւոյթները», Պրն. Պապական: Ինչո՞ւ որոշ չէք ըսեր եւ անորոշութիւններու տակ կ'ուզէք ապաստանիլ: Որո՞նք որ ալ ըլլան, սակայն, Չնդչոյ Վերջ. Միութեան եւ անոր հեղինակաւոր մարմնոյն՝ Կեդր. Վարչութեան հաւաքակորդները, թող որոշ գիտնան թէ երկչոտը մեր մէջ պիտի չգտնեն, ինչպէս մեր մէջ չեն դրը պարտողը, եսամոլը եւ ոչ ալ սնտփառ տղէտը:

Քաւիցի որ ուզենք պատճառ ըլլալ «անախորժ երեւոյթներու» ցուցադրութեան մեր հայրենակցական կեանքին մէջ, բայց եթէ ատիկա պիտի ըլլայ ներկայ կացութեան անխուսափելի հետեւութիւնը, մենք պատրաստ ենք դիմադրաւել դայն՝ առանց երկնչելու եւ ճակատէն կռուելով:

Եւ ինչո՞ւ երկնչում մեր կողմէ: Թող անոնք վախնան, որ ազիտութիւնը եւ անարդարութիւնը ունին իրենց բնկեր: Ե՞րբ արդարը եւ իր իրաւունքին դիտակցողը վախցած է չարիքի ասպետներէն: Մենք արդարութիւնը եւ իրաւունքը ունինք մեզի զինակից եւ ոչ ոք կրնայ ահաբեկել մեզ փուճ ու սնամէջ սպաննալիքներով:

Չնդչոյ Վերջ. Միութեան Վեցերորդ Պատգ. Ժողովը վերջնացաւ, այն որոշումը տարով որ Ծիքակոյի դատը հետապնդուի մինչեւ իր վերջնական ելքը:

Եւ պիտի շարունակուի դատը, թո՛ղ ասիկա որոշ գիտնան Ծիքակոյի «քլիք»ը եւ Պրն. Պապականի մտայնութիւնը ունեցող բոլոր հայրենակիցներ:

Չնդչոյ Վերջ. Միութիւնը եւ անոր Կեդր. Վարչութիւնը դատարանի դիմելէ առաջ ամէն միջոցի դիմեցին եւ իրեն սամեմակելովն՝ ընտրեցին դատարանը: Պատասխանատուները յայտնի են: Ուստի պէտք է արդարութիւնը իր յագեցումը գտնէ եւ արժանի դատաւարութիւնը տայ չարիքի սերմերը մեր մէջ սերմանողներուն:

Չնդչոյ Վերջ. Միութիւնը բնաւ երբեք «անդունդին եզրը» չէ հասած: Ընդհակառակը այժմ շատ աւելի ստույգ է ու կորովի, շատ աւելի յուսալից է անոր ապագան, որովհետեւ մաքրագործութիւնը տեղի կ'ունենայ ազդուարդիւն կերպով, որովհետեւ անձնական կամ խմբական շահերէ ու կամայականութիւններէ աւելի ու առաջ օրէնքը կը սկսի տիրել, որովհետեւ Չնդչոյիներ իրենց քաջութեան, առատաձեռնութեան եւ այլ բազում բարեմասնութեան վրայ կ'աւելցնեն նաեւ հեղինակութիւնները յարգելու մեծագոյն առաքինութիւնը: Եւ ասիկա անհրաժեշտ է ոեւէ կազմակերպութեան, ինչպէս մեր սիրելի Միութեան զարգացումին եւ յառաջդիմութեան համար:

Բայց մենք շարունակենք մեր ճամբան, առանց ուշադրութիւն ընծայելու կողմնակի եւ սմանդուկ աղմուկներու:

Պ. ՓԱՊՈՒՃԵԱՆ



ՄԵՐ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Չնդչոյ Վերջինաց Միութեան 2. Պատգ. Ժողովը տեղի ունեցաւ Յուլիս 7, Կիրակի օր, Նիւ Եորքի մէջ:

Չորս մասնաճիւղեր կը ներկայանային Ժողովին իրենց հետեւեալ պատգամաւորներով. — Լօրէնսէն՝ Պրն. Լ. Պատգ. Բոստան եւ Ս. Յակոբեան, Ծիքակոյէն՝ Պ. Փապական եւ Ս. Պատգ. Գիւրաշիքիայէն՝ Պ. Կակոյեան, Նիւ Եորքէն՝ Ս. Խաչատուրեան եւ Ս. Ազնաւուրեան, Իսկ Կեդր. Վարչութեան ձայնը կը ներկայացնէր Ա. Փապական:

Կեդր. Վարչութեան ատենապետ Պրն. Պ. Ստեփանեան բարի գալուստի եւ յորդորի մէջ քանի խօսքերէն վերջ, Ժողովը անցաւ իր գործին՝ ընտրելով իր ղեկանը եւ երեք անձերէ բաղկացեալ հաշուեքնիչ յանձնախումբ մը: Կարգադրուեցան մասնաճիւղերէ կազմ հարցերը, ինչպէս նաեւ Կեդր. Վարչութեան միամեայ տեղեկագիրը: Հարցերէն սմանք նախորդ Ժողովներէն մնացած ըլլալով՝ լուծուեցան չնչիլ եւ օգտակար կերպով: Մենք հոս զսահմանակցութեամբ կարճատեւ կարեւոր հարցեր, որոնք միաձայնութեամբ ընդունուեցան եւ լիազօրութիւն տրուեցաւ նորոն տիր Կեդր. Վարչութեան որպէս զի անմիջապէս գործադրէր զանոնք:

Առաջին որոշումը եղաւ Նուպարաշէնի մէջ քանի մը տուններ շինելու համար անմիջապէս հասկեցողութեան պատկան մարմնոյն հետ եւ ի հարկին Կեդրոնի տրամադրութեան տակ եղող կանխիկ դրամը գործածել որպէս կանխավճար:

Երկրորդ որոշումը եղաւ լուծումը հարցի մը, որ նոր ուղեղով մը ապացոյցը կրնայ նկատուիլ եւ որ մինչեւ հիմա աննկատ մնացած էր: Որոշուեցաւ որ մեր արտասահմանի, այսինքն Հայկոյի, Պէյրութի եւ Մարտէշլի մասնաճիւղերուն հետ կանոնաւոր յարաբերութիւն մշակուի եւ ձայն տրուի անոնց մեր տարեկան պատգ. Ժողովներուն մէջ, ինչպէս կը տրամադրէ Միութեան կանոնադիրը:

Այս պարագան պատահութիւն պիտի տայ որ մեր երկրի մասնաճիւղերը ասիկ վերջ շատ աւելի շխառի ճամբայէքան եւ իրենց փափաքները յայտնեն ու իրաւունքները պաշտպանեն ուղղակի Կեդր. Վարչութեան միջոցաւ, փոխանակ մասնաճիւղերու կամ անհատ բարեկամներու ղեկավար, որովհետեւ այս վերջին կերպը միշտ ալ վնասած է մեր հայրենակցական գործերուն եւ տեղի տուած է անհարկ ընկաւաններու:

Գնահատանքի եւ շնորհակալութեան արժանի է Նիւ Եորքի մասնաճիւղին ասպնջականութիւնը: Լաւ կարգադրութեամբ մը Նիւ Եորքի ճաշարաններէն մէկուն մէջ ճաշ մը տրուեցաւ պատգամաւորներու: Կէսօրէ վերջ ժամը երեքին Ժողովը դադար տուաւ եւ պատգամաւորներ ու ունկնդիր հայրենակիցներ բոլորը միասին մեկնեցան ճաշարան, ուր ուրախ զուարթ ճաշիկ յետոյ, պատգ. Ժողովը կրկին լի տշխատանքին սկսաւ:

Ժողովը անցաւ մնացեալ հարցերուն: Կեդր. Վարչութեան վայրի ընտրութիւնը բաւական երկար լինարանութեան նիւթ եղաւ: Հոս անմիջապէս ըսենք որ հակառակ Նիւ Եորքի ունեցած կարգ մը առաւելութիւններուն, շատերու փափաքն էր որ այս տարի ալ Լօրէնսի արուի հայրենակցական գործերը վարելու ծանր պատասխանատուութիւնը թեւ ալ պէտք ունենային, եթէ Պրն. Թուխման Պապականի «Հայրենիք»ի Յուլիս 3-ի թիւին մէջ հրատարակած գրութիւնը չփոխէր արամադրութիւնները: Հարկ կը տեսնենք սեւ թէ Պապականի գրութիւնը շատ տխուր տպաւորութիւն թողուց բոլոր պատգամաւորներու եւ ներկայ հայրենակից

կերտ վրայ, որու ի հետեւութիւն որոշուեցաւ որ կեդրոնը
բացառութիւն պահանջէ յիշեալ պարոնէն՝ իր յայտնած
իրականութեան բոլորովին ներհակ միտքերուն համար:

Ժողովը փակուեցաւ ուշ ժամանակ եւ պատգամաւորներ
զոհուեցան իրենց տեղերը վերադարձան:

ԱՅԲՄԷՆ

Ուէսթ Նիւ Եորք

ԽՕՍԲ ՄԸ ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՆ

Ուել անհատ քննադատելու իրաւունք կը ստանայ, երբ
լիովին կը կատարէ իր պարտականութիւնը:

Մեր մէջ շատ մը հայրենակիցներ անիմաստ ու անհար-
կի քննադատութիւններ կ'ուղղեն կեդրոնի հասցէին եւ Մի-
ութեան գործունէութեան մասին: Միայն կը քննադատեն ու
կը վրանան իրենց աջակցութիւնը՝ անհեթեթ պատրուակներ
էջք բերելով: Միութիւնը, կ'ըսեն, չօգնեք կարօտեալնե-
րու, ինչո՞ւ մենք պիտի օգնենք Միութեան: Այս միտքը ար-
տայայտողներ պէտք է դիտանան որ վերաշինացը պիտի կըր-
նայ հասնիլ բոլոր կարօտեալներուն, եթէ ամէն Չնդուչի
իր լուծման բերէ Միութեան եւ իր պարտքը կատարէ նիւթա-
պէս թէ բարոյապէս: Քննադատելէ աւելի ու առաջ՝ կատա-
րենք մեր պարտքը եւ Միութիւնը պիտի կրնայ, վստահա-
բար, օգնութեան ձեռք երկարել կարօտեալին ու իրագործել
ի նպատակը:

ՃԱՆ ԱՇՏԱՐԱԿԵԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ «ԾՕՎԱՌ»Ի ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Մերիկ հայրենակիցներ,

Չնդուչի վերաշինաց հինգերորդ տարեդարձին առթիւ 5
հինգ) տուար կը զրկեմ ձեզի, չորս գաւազներու անունով:

Փողիկ Սարգիս Մինակ	\$2.00
» Սիւրուն Մինակ	1.00
» Սաթենիկ Մինակ	1.00
» Սօնա Մինակ	1.00

«Ծովաւո» կանոնաւոր կը ստանամ եւ շատ հետաքրք-
րութեամբ կը կարդամ: Քաղաքիս մէջ ուրիշ հայրենակից
չկայ զրեթէ, հոս է Սիմոն Դեղինեանը, որ շատ աղքատ է
եւ բռնադատութիւն կ'ընէ, ինչպէս նաեւ Հոսմիկ Մամա
Մարտիրոսեան 70 տարեկան ծերունին:

Միութեան հրապարակ հանած օրացոյցները ստացած
եմ. խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ: «Ծովաւո»ի
զերը շատ մեծ է եւ ամէն գնահատանքի արժանի. կը մաղ-
թեմ որ «Ծովաւո»ի նիւթապէս թէ բարոյապէս աջակցողները
Աստուծոյ վարձատրուին:

Յարգանքներով

Գ. ՄԻՆԱԿ

Աղետաւարէք, Սուրիա

* * *

Յարգելի Հայրենակիցներ,

Ձեզմէ կը խնդրեմ որ բարեկամներէս մէկուն հասցէն
զրէք ինծի: Կը կարծեմ թէ Շիքակօ կը գտնուին:

Ես ընիկ Չնդուչի եմ, Գասապ Գաղարին աղջիկ գաւա-
կը, անունն է Սերուն Կօչկարեան, ամուսինս Կիլիկիոյ գէպ-
բին կախեցին: Ներկայիս Կիպրոս կ'ապրեմ երեք գաւազնե-
րու հետ: Իմ միակ նեցուկս է ամենամեծ աղաս, որ հիւանդ
է ուրիշ օգնութեան միջոց չունինք: Մենք հիմա թշուառ

վիճակ մը ունինք: Շատ երախտապարտ պիտի ըլլամ, եթէ
իմ աղագիտներէս, աշխնքն Գասապեաններէն ուեւէ մէկուն
հասցէն իմացնէք ինծի: Եթէ կարելի է Չնդուչի վերաշինաց
Միութեան միջոցաւ օգնութիւն մը ըրէք մեզի, փրկելու հա-
մար մեր կեանքը:

Յարգանք

ՍԵՐՈՆ ԿՕՇԿԱՐԵԱՆ

Թիւ 4. Նիկոսիա, Կիպրոս

* * *

Յարգելի Հայրենակիցներ,

Շնորհակալ եմ ձեզմէ, որ ամէն ամիս պատիւը կ'ընէք
ինծի զրկելու «Ծովաւո» թերթիկը: Անկեղծ ըլլամ ըսելու,
որ «Ծովաւո»ի ժամանումը կ'ուգեւորէ զիս, ինծի կը յիշեցնէ
իմ հայրենիքի քաղցրիկ յիշատակները: Իսկապէս չեմ կրնար
նկարագրել այն խանդավառ ապրումները որ կ'ունենամ,
երբ «Ծովաւո»ը կը բանամ կարդալու համար: Հոն կը տես-
նեմ շատ մը խապրիկներ: Ես ըլլալով ձեզի Չնդուչիներու
զրացի Ատիլչի մը, չեմ կրնար անտարբեր մնալ ձեր զոհո-
ղութեանց: Ուստի խնդրեմ ընդունեցէք իմ ջնջին, բայց տա-
ժանագին աշխատող գործաւորի մը նուէրը՝ երկու տուար:

Յարգանքներով

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՊԵԱՆ

ՉՆԳՈՒՇՅՈՒՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷԱՆ.— Յուլիս 23ին տեղի ունեցաւ Սան Ֆրանչիսքոյի,
Օքլէնտի եւ մօտակայ գիւղերը բնակող Չնդուչիներու առաջին դաշտա-
հանդէսը, Բիշմարի եւ Սան Փապլօի միջեւ գտնուող փարքին մէջ:

Ուրախութեամբ պէտք է յիշել — հակառակ որ յայտարարուած չէր
նախապէս — այս չրջանակի բոլոր Չնդուչիներու ներկայութիւնը՝ ի-
րենց պարագաներով միասին: Արդարեւ, ասիկա ապացոյց մըն է թէ այս
կողմերը բնակող Չնդուչիները սերտ յարաբերութեան մէջ են ու կը մա-
յիկեն, շատ յաճախ, բնտանեկան հաւաքոյթներ՝ զոգորիկ եւ մաերմիկ:
Դաշտահանդէս մը տալու եւ այս չրջանի բոլոր Չնդուչիները իրա-
րու մօտ բերելու գեղեցիկ գաղափարը յրացողները եղան՝ Պրնք. Ճօրճ
Տէր Ստեփանեան եւ Մ. Փափաճեան: Ժրպան եւ անխոնջ գործողներ Ե-
ղան փեսայ Մ. Երեմեան, Տիկ. Պ. Գրիգորեան, Վիլթորիա ձէքտարն,
Պօյաճեաններ եւ Օր. Գրիգորեան՝ ուսուիւքներ պատրաստելու գործին
մէջ:

Կերտիտմի բնիպարին չմօռցանք մեր սիրելի «Ծովաւո»ը եւ անոր
յարատեւութեան անհրաժեշտ պէտքը մեր մէջ: Ի նպատակ «Ծովաւո»ի
պարզներու ճակատը փակցուած տուարներէն դալացաւ \$22.20:

Ներկայները ուրախացնելու համար սիրալոյսներ իրենց մասնակցու-
թիւնը բերին հանգէսին մեր սիրելի երգիչ Ճան Գօնտօեան՝ իր հմայիչ
ձայնով եւ Ա. Փիլոյան՝ իր պարով:

Պորին շնորհակալութիւններ ամէն անոնց որ ջանացին յաջողութիւն
մը ընել դաշտահանդէսը իրենց ներկայութեամբ, աշխատութեամբ եւ
գոհողութեամբ:

Սան Ֆրանչիսքոյի եւ Օքլէնտի պատուական հայրենակիցներու, ժա-
մանակ է որ սթափինք մեր թմրութենէն ու կազմակերպուինք: Ժամա-
նակ է որ վերջ տանք անհիմն բամբասանքներու, անտեղի յերիւրանք-
ներու, անամէջ ունակութիւններու եւ տղայամիտ բմբռնումներու: Այո՛,
ժամանակ է որ մենք ու, մեր համեստ միջոցներուն ներսը չափով, կա-
տարենք մեր պարտականութիւնը հանդէպ մեր քաճարաւ համայնքի բե-
կորներուն...:

Դէպի գո՞րծ. լաւ է ուշ քան երբեք:

Սան Ֆրանչիսքօ, Յուլիս 27

ՉՆԳՈՒՇՅՈՒ ՄԸ

Նիւ ԵՈՐԿ.— Մեր հայրենակից Պրն. Պաղտասար Էրմոյանի նշա-
նախօսութիւնը տեղի ունեցաւ Յուլիս 7ին, Նիւարքի մէջ:

*** Պրն. Աւետիս Թուրքիանի ամուսնութիւնը տեղի ունեցաւ Յու-
լիս 14ին: Մեր խնդակցութիւնները կը յայտնենք:

*** Պրն. Քրիստին մեր հայրենակիցներէն Թալանեան եղբարք Յուլիս
23ին գործէ տուն վերադառնալու առեւ ինքնաշարժի արկած մը ունեցած
են: Մեր իմացածին համաձայն, Ս. Թալանեանի թեւը կոտրած է, իսկ

միտները զօրաւոր ցնցում ունեցած են: Մեր ցաւակցութիւնը կը յայտ-
նենք Թաւանեան ընտանիքին:

ԼՐԱՏՈՒ

ՖԻԼԱՏԷԼՖԻԱ.— Պրն. Սարգիս Պողոսեան և իր տիկինը ինքնաշար-
ժով ճամբորդած ատեննին արկած մը ունեցած են: Բարեբախտաբար ար-
կածեալները վնասուած չեն:

ԼՐԱՏՈՒ

ԼՕՐԷՆՍ.— Հայրենակից Պրն. Խ. Տլօեան Յուլիս Տին, Ուրբաթ երե-
կոյ ժամը Տին, Երկաթուղիի կայարանէն անցած պահուն կը զարնուի
նոյն պահուն արագավազ անցնող շոգեկառքէն և հողին կ'աւանդէ մէկ
ժամ յետոյ, Հէյլըհիլի հիւանդանոցներէն մէկուն մէջ:

Թաղման տխուր արարողութիւնը կատարուեցաւ Յուլիս Տին, Երկու-
շաբթի օր: Պրն. Տլօեան Ամերիկեան Լէզէոնական Միութեան կը պատ-
կանէր. ի յարգանս անոր յիշատակին անոր զինակիցները մարմինը դե-
բեղման իջեցուցին Թիւանթի հարուածներ արձակելով:

Տարաբախտ Տլօեան իր ետեւ կը ձգէ կինը Տիկ. Եղիսարէթ և եր-
կու անչափահաս զաւակները: Ամբողջ պաշտօնը սղաց մեր սիրելի Հայ-
րենակցին դառնաղէտ կորուստը:

Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք հանդուցեալի բոլոր սղաւոր պա-
րզաններուն:

*** Փոքրիկ Յարութիւն Հաղարվարդեանի մկրտութիւնը տեղի ու-
նեցաւ իրենց բնակարանին մէջ, կնքահայրութեամբ Տէր և Տիկ. Յա-
կոբ Զօնթօեանի: Կը խնդակցինք:

*** Տէր և Տիկ. Կարապետ Ալոբլէթեան մանչ զուտակ մը ունեցան:
Մեր շնորհաւորութիւնները:

*** Պոսթոնի մեր հայրենակիցներէն Պրն. Տիգրան Կոստանեանի տ-
մուսնութեան ատիւ, կը փութանք յայտնել մեր խնդակցութիւնը:

*** Տիկ. Սառա Արզուման և փոքրիկ Մէյրի Արզուման անուարի-
նած են իրենց հիւանդութենէն: Կը խնդակցինք:

*** Տէր և Տիկին Թուխման Զաքօեանի փոքրիկը հիւանդ պատկած
է: Ըուտափոյթ ապաքինում կը մաղթենք:

*** Նիւ Եորքէն քաղաք ժամանեցին Տիկ. Մ. Էլմանեան, Մ. Գու-
նուլեան, Կարապետ ճղնաւորեան և Մինաս Գրիբեան: Բոլորին ալ բա-
րի զաւուստ կը մաղթենք:

Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԱՐՍԷՑԻ.— Պոսթոնի մեր հայրենակիցներէն Պրն. Մարտիրոս Գրի-
գորեան քաղաք ժամանեց: Բարի զաւուստ կը մաղթենք:

*** Հալկպէն Մարտէլլ ժամանեցին Տիկ. Աննա Թուրոյեան և իր
աղջիկը, ինչպէս նաև Պրն. Նշան Նիգամեանի զէնին: Թուրոյեաններ
մեկնեցան Վալանս՝ Պրն. Պօլոս Թուրոյեանի մօտ: Բարի զաւուստ մաղ-
թելով՝ բոլոր բարեկամներուն աչքը կը լուսենք:

*** Տէր և Տիկին Խ. Եղիկեան մանչ զուտակ մը ունեցան: Մեր իր-
դակցութիւնը կը յայտնենք:

*** Տիկին Մ. Մըլիքեան մէկ շարժումն հիւանդութենէն անուարի-
նեցաւ: Մեր ուրախութիւնը կը յայտնենք:

*** Պրն. Խ. Եօքսուլեան իր շնորհակալութիւնը կը յայտնէ Եղսա
Զօնթօեանի և Լօրէնսի հայրենակիցներուն՝ իրենց նիւթական փոքր ինչ
նուէրին համար:

Պ. ՏԱՐՂՈՒՆԵԱՆ

ՅԻԷԶԵՕ.— Յուլիս Կին, Սան Ֆրանչիսքոյէն քաղաք ժամանեցին
Տէր և Տիկ. Մ. Պօյաճեան, Մ. Փափաճեան և ճան Գօնտօեան: Տէր և
Տիկին Մ. Պօյաճեան հիւրասիրուեցան Տէր և Տիկին Ա. Ս. Սըրբեա-
նէ, Մ. Փափաճեան՝ Կ. Յակոբեանէ և ճան Գօնտօեան՝ իր եղբորմէն:
Անոնք այցելեցին զբիթէ բոլոր հայրենակիցներու: Մեր պատուական
հիւրերու արտայայտութիւնը այն էր թէ իրենք ալ կը փափաքին ու պի-
տի ջանան Սան Ֆրանչիսքոյի և Օբլէնտի մէջ կազմել Զնվոյ Վերջ.
Միութեան մասնաճիւղ մը:

ՏԱՅՆՈՒՊԱ.— Տէր և Տիկին Կ. Տօգուլեանի բնակարանին մէջ տե-
ղի ունեցաւ իրենց մանչին մկրտութիւնը, ձեռամբ Ֆառլըրի Վարդա-
պետին և կնքահայրութեամբ Տէր և Տիկ. Պ. Նաճարեանի: Ներկայ էին
հայրենակիցներէ շատեր, ինչպէս նաև Սան Ֆրանչիսքոյի մեր հիւրերէն
Պրն. Մ. Փափաճեան և ճան Գօնտօեան: Վարդապետին բարեմաղթու-

թիւններէն յետոյ, ժողովուրդը բաւորուեցաւ պատրաստուած սեղանի
շուրջ և ուրախացաւ մինչև ուշ ատեն: Երգեց ճան Գօնտօեան: Ներ-
սէն երկար օրեր մաղթելով փոքրիկ Նիկողոսին և ծնողաց ու աղ-
կաններուն աչքը լուսելով՝ բաժնուեցան:

ՍԷԼՄԱ.— Յուլիս Դին Խ. Մ. Սըրբեանի աղջիկն մէջ պատ-
տուած էր ճաշտեղան մը, ի պատիւ Սան Ֆրանչիսքոյի մեր հիւրերուն
ճան Գօնտօեանի և Մ. Փափաճեանի: Սեղանին շուրջ ստեղծուեցաւ բ-
տանեկան մտերմիկ մթնոլորտ մը: Վերջիւնեցան երկրի մեր սովոր-
թիւները և նոր բոյներ կազմելու համար ջանքեր եղան:

Պրն. Մ. Փափաճեան իրեն յատուկ կատակաբանութեամբ միշտ
բախ պահեց ներկաները: Սեղանին փայլը աւելցուց Գօնտօեան իր եր-
բով: Ներկաներ շնորհակալութիւն յայտնելով Տէր և Տիկ. Խ. Մ.
ըրմեանի՝ ուշ ատեն մեկնեցան:

ՍԱՆԿՐԻ, Գալիֆ.— Մեր տարէց հայրենակիցներ Տէր և Տիկ. Ա.
տիս Տաղտիկեանի որդին Պրն. Հայկակ տեղւոյս բարձրագոյն վարժա-
րի ընթացքը աւարտեց մեծ յաջողութեամբ և ատանքին հանդիսանալ-
ի 65 դասնիկներուն մէջ:

Հինգ հարիւրէ աւելի բազմութեան մը ներկայութեան, Պրն. Հա-
կակ ճառախօսութիւն մը ըրաւ և արժանացաւ բոլորի զնահատանին և
ծափահարութեան: Տէր և Տիկ. Ա. Տաղտիկեան ի տես իրենց զաւակ-
այս յաջողութեան, անպատմելի ուրախութեամբ լեցուեցան, ինչպէ-
նաև բոլոր Զնգուլիները, որոնք իրենց համաքաղաքացի պատանի
յաջողութեամբ պատուուած զգացին ինքզինքին:

Մեր խնդակցութիւնը կը յայտնենք Տէր և Տիկ. Տաղտիկեան և
մաղթենք որ Պրն. Հայկակ իր մտադրած հիւղին մէջ աւելի մեծ յա-
ղութիւններ ձեռք բերէ:

ԼՕՍ ԱՆՃԷԼԸՍ.— Տէր և Տիկ. Սարգիս Պետրոսեան (Ֆալիթեան)
աղջիկ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք ծնող-
եւ աչքի լոյս կը մաղթենք Յ. Պապուսին:

Կ. ԱՐԵՄԵԱՆ

ՇԻՔԱԿՕ.— Տէր և Տիկ. Գ. Կէօքճեան, Պրն. Կ. Եօքսուլեան և Կ.
Զինագործեան, որոնք արձակուրդի ելած էին ինքնաշարժով, ճամբի
որակած մը ունեցած են: Ինքնաշարժը 15 ոտք բարձր տեղէ մը վար ի-
կած է, մեքենան բոլորովին կորած է, սակայն ուրախ ենք ըսելով
արկածեալներէն ոչ մէկուն վնաս մը պատահած է:

*** Պրն. Գ. Թէլլօեանի կինը քաղաք ժամանեց իր արձակու-
րոյն ճեռ անցնելու համար: Բարի զաւուստ կը մաղթենք:

*** Պրն. Օ. Ֆրանկեան, որ ամուսնանալու համար անտառակ
մեկնած էր, իր տիկնոջ հետ քաղաք ժամանեց: Բարի զաւուստ կը մա-
ղենք:

*** Տէր և Տիկ. Թ. Տէր Խաչատուրեան աղջիկ զուտակ մը ունեցան:
Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Տէր և Տիկ. Կ. Յովսէփեան և Տէր և Տիկ. Յ. Բարդղղեան
որ արձակուրդի ատիւ Միլուօքի գացած էին, քաղաք վերադարձան:
Բարի զաւուստ կը մաղթենք:

*** Տէր և Տիկ. Պ. Մուխալեանի փոքրիկին մկրտութիւնը տեղի ու-
նեցաւ Միլուօքի մէջ, կնքահայրութեամբ Պրն. Ս. Իսրայէլեանի:
ԼՐԱՏՈՒ

ԴԱՇՏԱՀԱՆԳԻՍ.— Զնգուլ Վերջ. Միլուօքի Լօրէնսի Մասնաճիւղի
զաւուստանդէսը տեղի պիտի ունենայ Օգոստ. 25ին, Սապօնեան-Գրի-
եան ազարակին մէջ:

ՆՈՒԷՐ «Ծ Օ Վ Ա Ռ»

Սան Ֆրանչիսքոյի և Օբլէնտի հայրենակիցներէն
Կ. Մինակեանէ, Իսքէնտարուն, Սուրիա

Գումար՝

Շնորհակալութիւն բոլորին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԹ.— Շնորհակալութեամբ ստացանք 3 տարի
մար մը՝ Իսքէնտարունի մեր հայրենակից Պրն. Գ. Մինակեանէ:
Զնգուլ Վերջ. Միլուօքի Լօրէնսի Մասնաճիւղի վարչութիւնը